ԱՐՏՅՈՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԻԴԵԱԼԻ ՄԵԿ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ (ՊՈԼԻԲԻՈՍ, ԿԻԿԵՐՈՆ)

Աշխարհակալ տերության ձևավորմանը համընթաց Հռոմն ու հելլենիստական աշխարհը Ք.ա. III-II դդ. հայտնվեցին քաղաքակրթական տարասեռ փոխազդեցությունների ծիրում: Կիկերոնը դրանք ներկայացնում էր «իրավունք-բարոյականություն» բևեռների համատեքստում[1] :

Հունական հասարակական գիտակցության մեջ ավանդաբար ընդգծված էր բարոյագիտության դերը: Բարոյականի (արդարի) մասին պատկերացումներից բխեցվում էին տիեզերքի և մարդկային համակեցության հիմնակազմիկ նորմերը, հաստատություններն ու օրենքները[2]: Այդու՝ հասարակական տարբեր խմբերի (տոհմիկներ, դեմոսի առանձին խավեր) բարոյական արժեքներին համընդգրկուն բնույթ էր վերագրվում:

Հույներն այդ արժեքներն անմիջականորեն լծորդում էին պետական-քաղաքական ձևերի (պոլիտեիա) կառուցվածքի ու բովանդակության հետ՝ մենիշխանություն, ազնվապետություն, ժողովրդավարություն (տես Plato, Rep., VIII.547 d sqq.; Arist., Polit., 1276 b 30, 1280 a 7-30, 1282 b 9-11, 1289 b 28-1290 a 25, 1301 a 26-39, 1309 b 3, 1318 a 11-1318 b 5; Polyb., VI.6-9): Պոլիտեիաների շրջափոխությունն, ըստ նրանց, կազմում էր պատմության հիմնական բովանդակությունը[3]: Ի հետևանս այս մոտեցման պատմությունն ստանում էր բարոյական երանգավորում: Վերջինիս ծայրահեղ լուսաստվերային արտահայտությունը «հելլեն-բարբարոս» հակադրությունն էր, որտեղ հույներին վերագրվում էին կատարյալ պետական և բարոյական որակներ, իսկ բարբարոսներին՝ դրանց հակարժեքները: Վիճակի հաղթահարմանը միտված՝ Ալեքսանդր Մակեդոնացու ճիգերն անգամ ի դերևս անցան:

Ի տարբերություն հունական աշխարհի, Հռոմում վաղ շրջանից ի վեր իրավունքն ամբողջովին չէր համընկնում բարոյականության հետ: Այն ընկալվում էր իբրև հռոմեական համակեցության յուրահատուկ սակրալ-քաղաքական

---

[1] Հռոմ-Հունաստան հարաբերակցությունում Կիկերոնը որպես հունական սկիզբ նշում է իմաստասիրական ուսմունքները, որպես հռոմեական սկիզբ՝ նախնյաց հաստատություններն ու իրավունքը (տես Cic., De Rep., III. 3.5-4.7)

[2] Степанян А., Телунц А., К проблеме классической модели социального общежития (древнегреческий город — государство) — Глобус Науки, 4 (2004), сс. 87-92

[3] Fritz K. von, The Theory of Mixed Constitution in Antiquity, N.Y., 1954, pp.157-158

հենքը: Այդու՝ յուրաքանչյուր օրենքի ընդունումը ենթադրում էր վերջինիս մշտնջենական կիրարկություն[4]: Մյուս կողմից, դրա պահպանմանն ու մեկնաբանմանը վերագրվում էր սրբազնային իմաստ՝ ընդգրկելով գերագույն քրմերի (պոնտիֆեքսների) պարտականությունների մեջ[5]: Եվ հռոմեական համակեցական կարգը ներկայանում էր իբրև մեկընդմիշտ սահմանված իրավունքների (և պարտավորությունների) ամբողջություն[6]: Ավելին, օրինաստեղծությունը դիտարկվում էր իբրև հռոմեական ինքնության կայացման միջոց:

Այս կերպ էր մեկնաբանվում նաև պատրիկների (Հռոմի բնիկների) և պլեբեյների (տարաբնակների) շուրջ երեքհարյուրամյա միջդասային պայքարը: Նպատակը ոչ թե ավանդական իրավակարգի հեղաշրջումն էր, այլ դրա ընդլայնումը ողջ հանրույթի վրա:

Սակայն Ք. ա. II դարի վերջերից հռոմեական համակեցությունը հայտնվեց ճգնաժամի մեջ: Դա նախ և առաջ պայմանավորված էր աշխարհաբավալ տերության և ավանդական քաղաք-պետության (ցիվիտաս) կառուցվածքային անհամատեղելիությամբ[7]: Այս կապակցությամբ հասարակությունը տարփեղկվեց հակադիր մասերի՝ սենատական վերնախավ, պլեբս (ամբոխի վերածվող ժողովուրդ), իտալիկներ, ստրուկներ, ուժեղ անհատականություններ: Հակադրության յուրօրինակ բևեռ էին կազմում պրովինցիալները (նահանգաբնակները):

Ինչպես և սպասվում էր, հակադրությունն ընդունեց խիստ արտահայտված իրավական երանգ՝ Օրենքի (Բնության գոյակարգ) և օրենքի (համակեցական կարգ) միջև[8]: Հանրապետությունը հանգեց ինքնաբացասման, և տարբեր դասերի (իսկ հետագայում նաև անհատների) շահերին հետամուտ՝ իրավական համակարգը սկսեց ընձեռել տարամերժ գործողություններ կատարելու և դրանք օրինականացնելու հնարավորություններ: Իրավունքի նորմերը վկայակոչելով էին իրագործվում տոհմիկների օլիգարխիան, ժողովրդական տրիբունների խռովությունները, անձնական դիկտա-

---

[4] Бартошек М., Римское право, М., 1989, сс 179—180

[5] Հանրապետության վաղ շրջանում , Hunter W.A., A Systematic and Historical Exposition of Roman Law in the order of a Code, London, 1903, pp. 10, 52; Штаерман Е.М., Римское право, - в кн. Культура Рима, т.I, М., 1985, с.211

[6] Հիմնական իրավունքներն էին՝ ծայնի, մագիստրարտուրա զբաղեցնելու, ամուսնության, գործարքներ կնքելու և այլն, պարտավորությունները՝ զինվորական ծառայությունը և (մինչև մ.թ.ա. 168թ.) հարկերի վճարումը; Бартошек М., ук. соч., с. 69; Hunter W.A., op. cit., p.30

[7] Егоров А. Б., Рим на грани эпох , Л., 1985, сс. 30—36; Кнабе Г.С. Материалы к лекциям по общей теории культуры и культуре античного Рима, М., 1993, с. 227

[8] Sabine G., A History of Political Theory, Chicago, 1973, p. 157

տուրա հաստատելու փորձերը: Երևույթի կիզակետը դարձան Ք.ա. 80-ական թթ. քաղաքացիական պատերազմն ու Սուլլայի դիկտատուրան՝ ի կատար ածված «իրավական» ճանապարհով[9]:

Ստեղծված իրավիճակից կար երկու ելք: Առաջինը ենթադրում էր վերադարձ Հանրապետության զարգացման ելակետին (ուտոպիական) վիճակին՝ «նախնյաց բարքերին» (mos maiorum)[10]: Ժամանակի քաղաքական գիտակցության մեջ դա նշանակում էր «հայրերի» (այսինքն տոհմիկների նեցուկ սենատի) անառարկելի հեղինակություն և իշխանություն: Առաջին հայացքից Սուլլան որդեգրել էր այս ուղին: Բայց միայն առաջին հայացքից. իր դիկտատուրայի ընթացքին (Ք.ա. 82-79թթ.) նա փորձեց ավելի հեռուն գնալ՝ Հանրապետության հետ համադրելով արտակարգ իրավունքներով օժտված իր անձը: Այս իմաստով նրա դիկտատուրան, անտարակույս, կարելի է զգալի քայլ համարել դեպի ապագա պրինցիպատը (հանրապետական միապետություն): Սակայն դա կատարվեց առավելապես ռազմական ուժի կիրարկմամբ, ուստի և ավարտվեց անհաջողությամբ:

Առկա էր նաև մյուս ելքը: Այն ենթադրում էր հռոմեական և հունական սկզբերի (իրավունք և բարոյականություն) համադրություն՝ կյանքի կոչելով «հռոմեական խնդրի» քաղաքակրթական նոր լուծում: Այս ուղին սկսեցին գիտակցել արդեն Ք.ա. II դարի Հռոմի առավել հեռատես պետական այրերը: Եվ առաջին հերթին Սկիպիոն Էմիլիանոսը (Ք.ա. 185-129թթ.), որի շուրջ ստեղծված գրական-իմաստասիրական խմբակը նպատակ ուներ հռոմեական միջավայր ներբերել հունական (մասնավորաբար ստոիկյան) ընկերաբանության նվաճումները[11]: Այս առումով հատկապես կարևոր էր նշանավոր հույն պատմագիր Պոլիբիոսի դերը: Նա մշակեց Հռոմի շուրջ օյկումենեի միավորման տեսությունը: Ընդսմին Հռոմը համադրվում էր տիեզերական Լոգոսին, որն իբրև Օրենքի բարձրագույն մարմնացում աշխարհին հաղորդում է կարգ և ներդաշնակություն: Եվ Հռոմն սկսեց ներկայացվել իբրև համակեցական կարգաբերության բևեռ: Զարգացնելով այս գաղափարը՝ խմբակը դարձավ ճգնաժամի հաղթահարման «տեսական հետազոտությունների» միջավայր[12]:

Հռոմի իդեալը մշակելիս Պոլիբիոսն ընդհանուր առմամբ մեկնարկում էր Արիստոտելեսի քաղաքագիտությունից՝ ուշադրության կենտրոնում պահելով նրա՝ պոլիտեիաների մասին հայտնի ուսմունքը: Որպես համակեցական

---

[9] Syme R., The Roman Revolution, Oxford, 1963, pp. 121-123
[10] Штаерман Е.М., ук. соч., с. 223
[11] Rist J.M., Stoic Philosophy, Cambridge, 1977, pp.123-125
[12] Walbank F.W., Polybius, Los Angeles – London, 1972, pp. 71-72

հաստատությունների, բարքերի ու օրենքների ամբողջություն՝ դրանք պատմության գլխավոր դերակատարներն են (տես Polyb., VI. 2.9-10, 47.1-4):

Հունաստանում տիրապետող «պարզ ու անկայուն» պետական ձևերին (մենիշխանություն, ազնվապետություն, ժողովրդավարություն) պատմագիրը հակադրում է «խառը ձևը», որի լավագույն օրինակը հռոմեականն է: Այստեղ մենիշխանական (կոնսուլություն), ազնվապետական (սենատ) և ժողովրդավարական (կոմիտիաներ) տարրերի համաչափ համադրումն ապահովում է ընդհանուր բարոյական սկզբունքների վրա կառուցված պետության կենսագործունեությունը (տես ibid., 18.8, հմմ. 10.7):

Սկսած Պունիկյան պատերազմների դարաշրջանից (Ք.ա. III-II դդ.) սենատը վերածվեց Հռոմի կարևորագույն պետական հաստատության: Այն ներկայանում էր իբրև բանականության սկզբունքի կրող (տես ibid., 51.6): Նրա հետ էր կապվում հասարակական կյանքի բանական կազմակերպումը: Շնորհիվ սենատի իմաստուն կառավարման Հռոմն ի զորու էր կարգ ու բարեկեցություն տարածել ողջ միջերկրածովյան ավազանի երկրներում՝ ներկայանալով իբրև Լոգոսի կամ Բախտի իրական մարմնացում (տես ibid., I.1.5, VI.2.3, VIII.2.4)[13]:

Հռոմեական պետության իդեալն ամբողջացնում էին նաև նրա պատմությունը կերտող պետական գործիչների (Մարկոս Կամիլլոս, Կատոն Ավագ, Սկիպիոն Ավագ, հատկապես Սկիպիոն Էմիլիանոս) կերպարները: Դրանք հյուսված էին ըստ առաքինությունների մի ամբողջական ու կուռ համակարգի, որի չափորոշիչներն էին մեծահոգությունն ու անբասիրությունը, չափավորությունն ու վեհանձնությունը՝ մասնավոր կյանքում, արիությունն ու հավատարմությունը հասարակական պարտքին, խելամտությունն ու գործիմացությունը՝ հանրային կյանքում (տես, օր., ibid., XVIII.5.9-12, XXXI.25.9, 28.10, 29.1, 29.8-10, XXXV.4.9, XXXVIII.21.2-3): Հելլենիստական աշխարհի պետական գործիչների կերպարում, ըստ Պոլիբիոսի, բացակայում էին հենց այս առաքինությունները: Նրանք պատկերվում էին իբրև շվայտ, փոքրոգի ու ծայր աստիճան եսասեր:

Պոլիբիոսի մշակած իդեալը հիմք դարձավ արդեն բուն հռոմեական քաղաքագիտական մտքի կողմից (Կիկերոն, Սալլուստիոս) պետության սեփական իդեալի մշակման: Այստեղ Հռոմը նույնպես ներկայացվում է իբրև լավագույն պետական կազմավորում՝ ստեղծված երեք պարզ ձևերի համաչափ համադրմամբ (տես Cic., De Rep., I.29.45, 45.69, 46.70, II.1.2, 41.68, 42.69):

---

[13] ibid., p.36

Համաչափությունն առաջին հերթին նշանակում էր իրավունքների ու պարտականությունների այնպիսի բաշխում, որ մագիստրատներն ունենային անհրաժեշտ գործադիր իշխանություն, սենատն՝ անհրաժեշտ հեղինակություն, իսկ ժողովուրդն՝ անհրաժեշտ ազատություն (տես ibid., II.33.57): Գաղափարը գալիս էր Պլատոնից, որը միայն նման կառույցի մեջ էր տեսնում հանրույթի համերաշխությունն ու պետության կայունությունը (տես Plato, Legg., 691e-692a)[14]:

Ի տարբերություն Պոլիբիոսի, հռոմեական մտածողների իդեալն իրական էր՝ միայն անցնելով օրենքի (իրավունքի) պրիզմայով: Համաձայն Կիկերոնի, իրավունքի հիմքում սեփականի և ուրիշինի սահմանազատումն է, որով յուրաքանչյուր քաղաքացու հատկացվում է իր հստակ տեղը հանրույթի ծիրում: Այսու՝ մասնավոր շահը համահարաբերակցվում էր հանուր շահին (տես Cic., De Rep., I,13.20, 25.39; Idem, De Offic., II.3.10, III.6.26, 7.34)[15]: Ավելին, օրենքի առկայությամբ կամ բացակայությամբ էր պայմանավորվում կառուցիկ համակեցության առկայությունը կամ բացակայությունը (տես Cic., De Leg., II.5.12): Այստեղից հետևում էր Պոլիբիոսի (հունական) և հռոմեական իդեալների մեկ այլ արմատական տարբերություն. կառավարման անօրեն ձևերը (բռնապետություն, օլիգարխիա և ամբոխավարություն) հռոմեական պատկերացմամբ ոչ թե ուղիղ պոլիտեիաների հակածևերն են, այլ ընդհանրապես համակեցության հականիշը (տես Cic., De Rep., III.31.43-33.45)[16]:

Ըստ Կիկերոնի և Սալլուստիոսի, հենց այդպիսի «հականիշային ճգնաժամի» մեջ էր հայտնվել Հանրապետությունը Ք.ա. I դ. կեսերին. «մեր լավագույն պետությունը չկա» (տես Cic., De Rep., I.47.71; հմմ. Sall., Cat., X.6): Պոլիբիոսը գուշակեց ճգնաժամը՝ ելնելով իր տեսության ընդհանուր տրամաբանությունից (տես Polyb., VI.4.13, 9.12-13, 18.5, 57.5): Մինչդեռ Կիկերոնն ու Սալլուստիոսն ապրում էին հենց դրա պայմաններում: Պոլիբիոսի համար ճգնաժամը ճակատագրական անխուսափելիություն էր, իսկ հռոմեացի մտածողները ձգտում էին հաղթահարել դա բանական ճիգով: Նրանք դա կապում էին ոչ այնքան ավանդական Հանրապետության ինքնամաքրման հնարավորության, որքան իդեալական պետական այրի կամային-քաղաքական գործունեության հետ (տես Cic., ibid., I.29.45, II.29.51, 40.67, 42.69, VI.1.1, 12.12; Sall., Ad Caesarem Epistulae):

---

[14] Reeve C., Plato, - in Political Thinkers. From Socrates to the Present, Oxford, 2003, pp. 61-62

[15] Штаерман Е.М., От гражданина к подданному, - в ук. кн., сс.49-51

[16] Syme R., Sallust, Los Angeles – London, 1974, pp.122-124

Այդ գործունեությունն առաջին հերթին օրենսդիր-վարչական բովանդակություն ուներ (տես Cic., ibid., I.2.2, 2.3): Ուստի առորեական գիտակցության մեջ սկսեց կարևորվել «նախնյաց հաստատությունների» և օրենքների համակարգի խոր իմացության անհրաժեշտությունը (տես ibid., V.3.5): Նախապես գերակշռում էր այն մտայնությունը, թե միայն «պրակտիկ հռոմեական միտքն» է ի զորու երկիրը դուրս բերել ճգնաժամից (տես ibid., I.2.3, III.3.6)[17]:

Ճգնաժամի հետագա խորացման պայմաններում ակնհայտ դարձավ միայն պրակտիկ-իրավական հիմքի վրա համակեցության կարգաբերման անարդյունավետությունը: Եվ հասարակական միտքն առաջ քաշեց հռոմեական ու հունական սկզբունքների՝ իրավունքի ու բարոյականության համադրման գաղափարը (տես Cic., ibid., III.3.5-6):

Համադրումն, ըստ Կիկերոնի, կարող էր կայանալ, մի կողմից, օրենքի տառի և ոգու համաձայնեցման, մյուս կողմից՝ բարոյական արժեքների կայուն համակարգի հաստատման ճանապարհով: Ըստ այդմ հիմնավորվում էր այնպիսի պետական գործչի անհրաժեշտությունը, որը կկարողանար համատեղել իր անհատականության ծիրում «օրինականությունն ու հակադիր հասարակական ուժերի նկրտումները» (տես App., XIV.3.20): Նրան վերապահված էր դառնալու հռոմեական համակեցության իրավական ղեկավարն ու բարոյա-քարիզմատիկ առաջնորդը: Այդ իդեալը մշակվեց Կիկերոնի ու Սալլուստիոսի կողմից մ.թ.ա. 50-40-ական թթ. և դարձավ պրինցիպատի հաստատման գաղափարախոսական հիմքերից մեկը:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Applanus, Roman History, in 4 vis., Loeb Classical Library, Cambridge, Massachussetts, 1958

Aristotle, Politics, Loeb Classical Library, Cambridge, Massachussetts, 1959

Plato, Laws, in 2 vis., Loeb Classical Library, Cambridge, Massachussetts, 1961

Plato, Republic, Penguin Books, London, 1987

Polybius, Histories, in 6 vis., Loeb Classical Library, London, 1960

Sallustius Crispus Caius, Works, Loeb Classical Library, Cambridge, Massachussetts, 1960

Tullius Cicero Marcus, De Officiis, Loeb Classical Library, Cambridge, Massachussetts, 1961

Tullius Cicero Marcus, De Re Publica – De Legibus, Loeb Classical Library, Cambridge, Massachussetts, 1959

---

[17] Штаерман Е.М., ук. соч., с. 28